ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1955 Общественные науки

Ֆ. Աղայան

ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին բանվոր դասակարգի և գյուղացիության մղած հերոսական պայքարը կարևոր նշանակություն ունեցավ ճնշված ժողովուրդների կողմից դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղված հետագա պայքարի համար։ Բոլշևիկների պարտիան, հանդիսանալով աշխատավորների շահերն արտահայտող միակ պարտիան, Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ մշակեց ռուսական ռևոլյուցիայի ստրատեգիական պլանը, նշելով, որ դասակարգային պայքարի հաղթանակը պետք է հասցնի պրոլետարիատի և գյուղացիության ռևոլյուցիոն-դեմոկրատական դիկտատուրային, որից հետո անմիջապես բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան կվերաճի սոցիալիստական ռևոլյուցիայի։

Սոցիալիստական ռևոլյուցիայի լենինյան տեսությունը, որի հիմքերը խարսխված են ռուսական առաջին ռևոլյուցիայի փորձի վրա, անցած կես դարի ընթացքում ուղենիշ է հանդիսացել ոչ միայն ռուսական, այլև ամբողջ աշխարհի ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի համար։

Ռուսական առաջին ռևոլյուցիան պատմական խոշոր փորձ հանդիսացավ և նախապատրաստեց 1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը։ Վ. Ի. Լենինը գրել է, որ առանց այդ փորձի «1917 թվականի Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը անհնարին կլիներ»[1]։ Այդ պայքարում բանվոր դասակարգը համոզվեց, որ ճնշված ժողովուրդների ղեկավարը և նրա ազատագրման իսկական ուղին ցույց տվող միակ պարտիան բոլշևիկյան պարտիան է, որը, զինված մարքսիզմ-լենինիզմի անպարտելի թեորիայով, պայքարում է դեմոկրատիայի և սոցիալիզմի հաղթանակի համար։

1905—1907 թթ. ռուսական ռևոլյուցիան, լինելով իմպերիալիզմի էպոխայի առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան, իր հարուստ փորձով և պատմական խոշոր նշանակությամբ ամբողջ աշխարհի աշխատավորների ազատագրական պայքարի մի նոր էտապ հանդիսացավ։ «Ռուսական առաջին ռևոլյուցիան նոր էջ բաց արեց համաշխարհային պատմության մեջ՝ քաղաքական խորագույն ցնցումների և ռևոլյուցիոն փոթորիկների դարաշրջանը, դրեց Եվրոպայում բանվորական շարժման վերելքի և Ասիայի ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման սկիզբը»[2]։

* * *

1905 թ. ռևոլյուցիան քաղաքական-ազատագրական պայքարի նոր էպոխա հանդիսացավ սոցիալական և ազգային ծանր ճնշման պայմաններում գտնվող ազգային փոքրամասնությունների կյանքում։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 13։

[2] «Ռուսական առաջին ռևոլյուցիայի հիսուն տարին» (Թեզիսներ)։

Հայ աշխատավոր ժողովուրդը՝ բանվորներն ու գյուղացիները, առաջին անգամ, ռուս բանվոր դասակարգի ղեկավարությամբ ոտքի ելավ քաղաքական պայքարի՝ ճնշողների դարավոր լուծը տապալելու և մյուս բոլոր ժողովուրդների հետ միասին իր ազատ կյանքը կերտելու համար։

Արդեն 19-րդ դ. վերջերից հայ աշխատավորները, ռուս բանվոր դասակարգի և նրա ավանգարդ ՌՍԴԲՊ-ի գլխավորությամբ՝ սկսեցին մասնակցել այն հերոսական պայքարին, որի նպատակն էր ինքնակալության և բուրժուա-կալվածատիրական դաժան կարգերի տապալումն ու նոր, դեմոկրատական-սոցիալիստական հասարակարգի ստեղծումը։

Այդ պայքարում հայ ժողովրդի ծոցից ելան Կոմունիստական պարտիայի մեծ գործին նվիրված անձնվեր ռևոլյուցիոն գործիչներ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Բ. Կնունյանցը, Մ. Մելիքյանցը, Հակոբ Հակոբյանը Ա. Մռավյանը և շատ ուրիշներ։

* * *

ՌՍԴԲՊ Կովկասյան Միությունը մեծ աշխատանք էր կատարում Հայաստանի կարևոր կենտրոններում, բանվորական շրջաններում և գյուղական վայրերում՝ պարտիական կազմակերպություններ և խմբեր ստեղծելու, տեղերում ծավալվող ռևոլյուցիոն աշխատանքը ղեկավարելու ուղղությամբ։

Այդ նպատակով Թիֆլիսից և Բաքվից հաճախ Հայաստանի տարբեր շրջաններն էին ուղարկվում պարտիական աշխատողներ և ագիտատորներ՝ բանվորների և գյուղացիների, ինչպես նաև զորամասերի մեջ կազմակերպչական աշխատանք տանելու և անլեգալ գրականություն տարածելու համար։

1902 թ. Ալեքսանդրոպոլում ստեղծվում է «ՌՍԴԲՊ Զինվորական խումբը», ապա՝ երկաթուղայինների և քաղաքի աշխատավորների պարտիական խմբակներն ու բջիջները, որոնք լայն աշխատանք են ծավալում կայազորի զորամասերում, երկաթուղային բանվորների և աշխատավորական մյուս խավերի շրջանում։

Ալեքսանդրոպոլում գործադուլներ և բանվոր-ծառայողների ելույթներ են տեղի ունենում դեռևս 1902—1903 թթ., իսկ 1904 թ. ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը որոշում է մայիսի 1-ի տոնակատարությանը տալ քաղաքական ցույցի բնույթ։

1905 թ. Ռուսաստանում և Անդրկովկասում ծավալված ռևոլյուցիոն շարժումները իրենց արձագանքներն են գտնում Ալեքսանդրոպոլի կայազորում, Ալեքսանդրոպոլ — Կարս երկաթգծի բանվորների մեջ, Ուլուխանլու — Դրեան կայարաններում, Ալավերդու պղնձահանքերում, Լոռու և այլ գյուղական շրջաններում և այլն։ Ռևոլյուցիոն շարժումները առանձնապես սուր բնույթ են ստանում Ալեքսանդրոպոլում՝ 1905 թ. «Արյունոտ կիրակիի» դեպքերից հետո։

1905 թ. Հունվարի 9-ի դեպքերից հետո Անդրկովկասում ռևոլյուցիոն շարժումները ընդունում են քաղաքացիական կռվի, երբեմն էլ քաղաքական գործադուլի, զինվորական ապստամբության ձև։ Շարժումները ծավալվում են ամբողջ երկրով մեկ։ ՌՍԴԲՊ 3-րդ համագումարը, որը տեղի ունեցավ 1905 թ. ապրիլի 12—27-ին Լոնդոնում, իր բանաձևի «Կովկասի դեպքերի մասին» բաժնում հատկապես ընդգծում է, որ Կովկասում բնակչության մեծամասնու-

թյան մեջ ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում ինքնակալության դեմ մղվող ռևոլյուցիոն պայքարը հասել է համաժողովրդական ապստամբության։ Համագումարը ողջունում է Կովկասի հերոս պրոլետարիատին և գյուղացիությանը՝ նրանց մղած հերոսական պայքարի համար և պարտավորեցնում է տեղական պարտիական կազմակերպություններին ամենաեռանդուն ագիտացիոն բացատրական աշխատանք տանել մասսաների մեջ [1]։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպության կոչերից մեկում նշվում է, որ 1905 թ. Հունվարի 9-ին «... առաջին անգամ լսվեց հեղափոխական թրմբկահարությունը, որն ամբողջ Ռուսաստանին արթնացրեց իր ձմեռային խոր քնից» [2]։

1905 թ. ռևոլյուցիան Հայաստանում առաջին հերթին իր արձագանքը գտավ երկաթուղային բանվորների և ծառայողների շրջանում։

1905 թ. մարտ ամսից գործադուլներ են տեղի ունենում Ալեքսանդրոպոլ—Ղարաքիլիսա գծի երկաթուղայինների մեջ։ Այդ գծի բոլոր ծառայողները դադարեցնում են աշխատանքը և պահանջում աշխատավարձի ավելացում, աշխատաքային օրվա կրճատում [3]։ Ալեքսանդրոպոլի կայարանում դեպոյի բանվորները նույնպես գադարեցնում են աշխատանքը։ Միայն զինվորական ուժով կարողանում են ստիպել դեպոյի բանվորներին վերսկսել աշխատանքը։ Թիֆլիսից մինչև Երևան ամբողջ գծի վրա զինվորական հսկողություն է սահմանվում։

Այդ օրերին՝ մարտի 20—21, չէր աշխատում նաև փոստ-հեռագրատունը [4]։

Ապրիլի 5-ին Ալեքսանդրոպոլ կայարանի գործադուլավոր բանվորներն ու աշխատավորները ներկայացնում են իրենց տնտեսական պահանջները։ Սույն օրը դադարում է գնացքների երթևեկությունը Թիֆլիս—Երևան և Ալեքսանդրոպոլ—Կարս գծի վրա։ Ապրիլի 7—8-ին անդրկովկասյան երկաթգծի բազմաթիվ կետերում բանվորներն ու ծառայողները գործադուլ են հայտարարում և բազմամարդ միտինգներ և հավաքույթներ կազմակերպում, հանդես գալով ռևոլյուցիոն ճառերով, ուղղված ցարական կառավարության դեմ [5]։

Երկաթուղայինների գործադուլային շարժումը նոր թափով շարունակվում է 1905 թ. հոկտեմբերին։

Հայաստանում ռևոլյուցիոն կարևոր կենտրոն էր Ալեքսանդրոպոլը։

1905 թ. ապրիլի 5-ին Ալեքսանդրոպոլի բնակիչները Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին ուղղված դիմումի մեջ պահանջում են, որ Ալեքսանդրոպոլն ունենա քաղաքային ինքնավարություն և իրենց տրվեն մի շարք իրավունքներ, դատավորները լինեն ընտրովի, դատական գործերը վարվեն տեղական լեզվով, ապահովվի պետության օգնությամբ՝ պարտադիր կերպով հողագործների հետ գնումը, մայրենի լեզվով ընդհանուր և պարտադիր տարրական կրթություն մտցվի Կովկասում, ժողովների և հավաքույթների ազատություն տրվի, սահմանվի 8 ժամյա աշխատանքային օր, կայուն աշխատավարձ, բանվորների պարտադիր ապահովագրում, Անդրկովկասում վերացվի ռազմա-

---

1 ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, մասն 1-ին, էջ 103—104, Երևան, 1954։

2 ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍ-ի ինստ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 264։

3 „Кавказский рабочий листок", № 7, 1905.

4 «Մշակ», № 59, 1905։

5 Վրացական ՍՍՌ ԿՊԿԱ, ֆ. 39, գ. 701, 193—195։

կան դրությունը, վերացվեն հավատի և կրոնի սահմանափակումները, վերադարձվեն հայկական եկեղեցիներին և վանքերին պատկանող հողերն ու ունեցվածքները և այլն։

Այդ պահանջները պարունակում էին աշխատավորության շահերից բխող մի շարք կարևոր քաղաքական ու տնտեսական հարցեր։

Իսկ հետագայում բանվորական գործադուլների ժամանակ ներկայացված պահանջները շոշափում էին ավելի արմատական խնդիրներ։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը հսկայական աշխատանք է կատարում բանվորների, զինվորների և քաղաքի աշխատավորների մեջ՝ քաղաքական գործադուլների կազմակերպման ուղղությամբ։

Այսպես, օրինակ՝ 1905 թ. մայիսի 22-ին Ալեքսանդրոպոլում մի քաղաքացի ռևոլյուցիոն ճառ է ասում, ապա դիմելով զինվորականներին բացագանչում է. «Կեցցե սոցիալ-դեմոկրատիան, կորչի ինքնակալությունը, իսկ դուք զինվորներ, եթե հրաման ստանաք... գործադուլի ժամանակ կրակել ժողովրդի վրա, չկրակեք, այլ կրակեք ձեր հիմար ոլետերին, որոնք հրամայում են կրակել»[1]։

Ճառախոսին ներկաները ողջունում են ծափահարություններով և համակրանքի բացագանչություններով։ Այս փաստը ցույց է տալիս, թե որքան բարձր էր ռևոլյուցիոն տրամադրությունը քաղաքի բնակչության և աշխատավորների մեջ։

1905 թ. օգոստոսի 8-ին տրված ոստիկանական մի գաղտնի հաղորդագրությունից երևում է, որ Ալեքսանդրոպոլում գոյություն է ունեցել պայթուցիկ նյութերի և զենքի գաղտնի պահեստ, որի մասին կովկասի ոստիկանության վարչապետին տեղեկություն են տվել ոստիկանության ագենտները՝ «Պլեմյաննիկը» և «Յուժնին»[2]։

Աշնան ամիսներին Անդրկովկասյան երկաթգծի գրեթե բոլոր հանդույցներում նորից ծայր են առնում գործադուլները։

Անդրկովկասյան երկաթուղայիններր 1905 թ. հոկտեմբերին մշակում են երկաթուղային վարչությանը ներկայացնելիք հետևյալ պահանջները.

1. Արձակել ժանդարմական կորպուսը.
2. Կազակներին հեռացնել Կովկասյան Երկրամասի սահմաններից.
3. Վերացնել մահապատիժը բոլոր տեսակի հանցավորների նկատմամբ։
4. Արգելել զինված զորքերին՝ միջամտելու մանիֆեստացիաներին.
5. Վերացնել էկզեկուցիաները Իմերեթիայում և Գուրիայում.
6. Լիակատար ամնիստիա պարգևել Անդրկովկասյան երկաթգծի աշխատակից բոլոր քաղաքական հանցավորներին և պետության հաշվին նրանց վերադարձնել աքսորավայրերից իրենց նախկին բնակավայրը.
7. Վերացնել երկաթգծի գումարտակները[3]։

Պարզ է, որ երկաթուղայինների առաջադրած այս պահանջները չբավարարվեցին։ Բանվորներր մերժում ստանալով՝ հայտարարում են ընդհանուր գործադուլ գործադուլներր ղեկավարում են ռևոլյուցիոն կոմիտեները, որոնք երկաթուղայիններին ոգեշնչում են ռևոլյուցիոն կոչերով և կազմակերպում հետագա պայքարի գործը։

---

[1] ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 23, գ. 133, թ. 2։
[2] Նույն տեղում, ֆ. 1, գ. 40, թ. 23։
[3] Նույն տեղում, ֆ. 1, գ. 192, թ. 5։

Անդրկովկասյան հոկտեմբերյան գործադուլային շարժմանը մասնակցում են նաև Ալեքսանդրոպոլի երկաթուղայիններն ու մյուս աշխատավորները։ Ալեքսանդրոպոլի բոլշևիկները սերտ կապ են պահպանում Թիֆլիսի հետ և համապատասխան ցուցումներ ստանում այնտեղից։

Հոկտեմբերի 14-ին ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպության ղեկավարությամբ երկաթուղային կայարանում տեղի է ունենում բանվորների խորհրդակցություն և որոշվում է միանալ Անդրկովկասյան երկաթուղայինների ընդհանուր գործադուլին։ Հաջորդ օրը, հոկտեմբերի 15-ին, առավոտյան ժամը 6-ին, սկսվում է գործադուլը։ Հոկտեմբերի 16-ին ՌՍԴԲՊ-ի Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը բաց է թողնում մի թռուցիկ, որը կոչ էր անում տեղական աշխատավորներին՝ միանալ երկաթուղայինների համառուսաստանյան գործադուլին և հետևողականորեն պայքարել ազատության մեծ գործի համար։ Գործադուլավորները շարունակում են իրենց պայքարը։ Երբ 1905 թ. հոկտեմբերի 17-ին հրապարակվում է ցարական կառավարության մանիֆեստը, սկզբում գործադուլային շարժումը որոշ չափով թուլանում է, բայց աստիճանաբար բանվորները՝ բոլշևիկների ագիտացիոն աշխատանքի շնորհիվ, հասկանում են, որ այն ցարի խորամանկ մի խարեություն է։ Հետևելով ՌՍԴԲՊ ծավալած պայքարին, Ալեքսանդրոպոլի սոց. դեմ. կազմակերպությունը հոկտեմբերի 29-ին հրապարակած կոչով առաջարկում է շարունակել պայքարը և չխարվել հոկտեմբերի 17-ի մանիֆեստով ցարի տված սուտ խոստումներից։

Ցարական կառավարությունը ձեռնարկում է ամեն միջոցի՝ գործադուլային շարժումը ճնշելու համար։ Մի կողմից «ազատություն» է խոստանում ժողովրդին, մյուս կողմից գաղտնի կարգադրություններ է անում՝ արյան մեջ խեղդել և շղթայակապ բանտերը նետել «քաղաքական հանցավորներին»։

Բանվորների միտքը լուսավորող և նրանց օգնող միակ պարտիան Կոմունիստական պարտիան էր, որը սովորեցնում էր մասսաներին՝ զգուշանալ ցարական սատրապների սուտ խոստումներից և դաշնակցական պարտիայի ավանտյուրիստական-տեռորիստական գործունեությունից։

Նոյեմբեր — դեկտեմբեր ամիսներին բանվորական գործադուլների ալիքը նորից սկսում է բարձրանալ և հասնել բարձր մակարդակի, հատկապես դեկտեմբերյան գործադուլի ժամանակ, երբ Անդրկովկասյան երկաթգիծը նորից անցնում է ռևոլյուցիոն մասսաների ձեռքը[1]։

Անդրկովկասյան երկաթգծի բազմաթիվ կետերում, չհաշված Թիֆլիսը, որտեղ գտնվում էր գործադուլային շարժման գլխավոր կոմիտեն, կազմվում են գործադուլային բյուրոներ կամ կոմիտեներ։ Այդպիսի բյուրոներ ստեղծվում են Բաթումի կայարանում, Փոթիում, Սամտրեդիում, Կվիրիլիում, Հաջի-Կարուլում, Բաքվում, Ալեքսանդրոպոլում և Երևանում։ Գործադուլային բյուրոներում ընդգրկվել էին կոփված և պայքարի փորձ ունեցող բանվորները, որոնց մի զգալի մասը՝ բոլշևիկներ էին[2]։

Ժանդարմական վարչությունը երկաթուղայինների նման ուժեղ շարժումը և ռևոլյուցիոն ելույթները բացատրում էր նրանով, որ երկաթգծի շրջակա բնակչությունը ամբողջովին տարված էր ռևոլյուցիոն տրամադրությամբ և երկաթուղայինների ամեն մի ելույթ ամենաջերմ պաշտպանություն էր գտնում

---

1 ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, դ. 192, թ. 6։

2 Նույն տեղում, թ. 7։

տեղական բնակչության մեջ, մանավանդ որ այդ երկաթուղայինների մեծ մասը տեղական բնակիչներ էին և լայն կապեր ունեին աշխատավորական մասսաների հետ [1]։

Երկաթուղայինների դեկտեմբերյան գործադուլը Ալեքսանդրոպոլում ավելի լայն թափ է ստանում։ Երկաթուղայինների հետ միաժամանակ գործադուլ են հայտարարում քաղաքի մի շարք հիմնարկ-ձեռնարկությունների բանվորներն ու ծառայողները։

Բացի այդ աշխատավորության լայն խավերը ակտիվ կերպով օգնում են գործադուլավորներին։ Այդ տեսակետից խոշոր նշանակություն ունեցավ կոմունիստների ղեկավարությամբ 1905 թ. դեկտեմբերի 13-ին Ալեքսանդրոպոլում կազմակերպված աշխատավորների ընդհանուր միտինգը, որի նպատակն էր գործադուլավորներին օգնելու համար միջոցներ հավաքել։ Այդ միտինգը փաստորեն վերածվեց քաղաքական մեծ ցույցի, որտեղ բազմաթիվ բանվորներ հանդես եկան ռևոլյուցիոն ճառերով և լոզունգներով։ Աշխատավորների այդ քաղաքական շարժումը գլխավորում էին հիմնականում երկաթուղայինները, որոնցից Սարգիսն Գեղենաշվիլին աչքի էր ընկնում իր քաղաքական գործունեությամբ։ Ընդհանուր միտինգին ակտիվ կերպով մասնակցում էին նաև փոստ-հեռագրատան աշխատողները, որոնց գլխավորում էր Ղազարյելովը [2]։

Դեկտեմբերի 13-ի ընդհանուր միտինգի կապակցությամբ մի շարք հիմնարկներ դադարեցրին աշխատանքը և գործադուլ հայտարարեցին։ Փոստ-հեռագրատան աշխատողները, իրենց համերաշխությունը ցույց տալով երկաթուղայիններին, առաջադրեցին մի շարք քաղաքական ու տնտեսական պահանջներ։

Ռևոլյուցիոն պայքարն ու քաղաքական հուզումները նոր թափով շարունակվեցին 1906 թ. ընթացքում։ Բազմաթիվ քաղաքներում, բանվորական ավաններում և գյուղական շրջաններում աշխատավորները 1906 թ. հունվարի 9-ը հայտարարեցին սգո օր։ Կազմակերպվեցին սգո միտինգներ և ցույցեր, որտեղ աշխատավորներն պատվում էին ցարական դահիճների և «արյունոտ Նիկոլայ II-ի» ձեռքով աղատության մեծ գործի համար զոհված հերոսների հիշատակը [3]։

Անդրկովկասում երկաթուղայինների 1905 թ. դեկտեմբերի 10-ին սկսված հայտնի գործադուլը շարունակվեց մինչև 1906 թ. հունվարի 8-ը [4], որի ընթացքում բանվորները ցույց տվեցին քաղաքական պայքարի մեծ ունակություն։

Այդ պայքարի կարևոր կենտրոններից մեկն էր Ալեքսանդրոպոլը, որտեղ երկաթուղայինները՝ հաղթահարելով բոլոր դժվարությունները, կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ, համառ կերպով շարունակեցին իրենց պայքարը մինչև վերջ։

Երկաթգծում ցարիզմի կողմից ռազմական դրություն հայտարարելը առավել չափով ծանրացրեց բանվորների դրությունը։ Դաշնակները, հանդես գալով որպես ցարիզմի գործակալներ, քայքայիչ ու դավաճանական աշխատանք էին տանում աշխատավորների մեջ։ Նրանք իրենց ազգայնական պրոպագանդայով ցանկանում էին հայերին հակադրել մյուս ազգությունների աշ-

[1] ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 192, թ. 7։
[2] ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍ-ի ինստ. Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 112, թ. 43։
[3] ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 194, թ. 13։
[4] Նույն տեղում, գ. 192, թ. 6։

խատավորներին և նրանց հետ պահել քաղաքական պայքարից, գործադուլային շարժումներից։ Դաշնակները իրենց տեռորիստական գործունեությամբ՝ պաշտպանելով կապիտալիստների ու ցարիզմի շահերը, հարկադրում էին բանվորներին աշխատանքի անցնելու։ Այդպիսի քայքայիչ աշխատանքի հետևանքով էր, որ ինչպես հաղորդում է ոստիկանությունը 1906 թ. հունվարի 2-ին, բանվորների մի փոքրիկ խումբ Ալեքսանդրոպոլի երկաթուղում ուզում էր վերսկսել աշխատանքը[1], սակայն բոլշևիկյան ուժեղ ազդեցության հետևանքով բանվորների միասնականությունը չի խախտվում։ Դաշնակների լրտեսական գործունեության հետևանքով ոստիկանությունը բանվորներից բանտարկում է 22 հոգու[2]։

Սակայն այդ բոլոր բռնություններն ու հալածանքները մասսաներին չեն վհատեցնում. նրանք ամենուրեք պատրաստվում են նոր ապստամբության։

Վ. Ի. Լենինը «Ռևոլյուցիայի սկիզբը Ռուսաստանում» հոդվածում գրում է. «Պրոլետարիատը զինվում է և զինում ժողովրդին... Բանվորներն ատրճանակներ են ձեռք բերում, իրենց համար զենք են կռում իրենց գործիքներից, ռումբեր են ճարում՝ հանուն ազատության հանդուգն պայքար մղելու համար»[3]։ Այդ նպատակով Ղարաքիլիսայում բանվորները գաղտնի կերպով կայարանում պատրաստել էին գնդացիր գործադուլի ժամանակ օգտագործելու համար[4]։

Բոլշևիկյան կազմակերպությունները լայն աշխատանք են տանում մասսաների մեջ, որի հետևանքով տեղական գործադուլները միավորվում են Ռուսաստանի բանվոր դասակարգի համընդհանուր քաղաքական պայքարի մեջ։ Այդ տեսակետից 1905—1906 թթ. ծավալված ռևոլյուցիոն մարտերը մասսաների քաղաքական դաստիարակության գործում մի դպրոց հանդիսացան և վերափոխող նշանակություն ունեցան նոր ռևոլյուցիոն իդեոլոգիայի ստեղծման գործում։

Ժանդարմական վարչությունը զեկուցագիր ներկայացնելով Կովկասի ոստիկանական վարչությանը, 1906 թ. մարտի 6-ին նշում էր, որ երկաթգծի «ամբողջ գործադուլը, անկասկած, սերտ կապ ունի այն շարժման հետ, որով բռնված էր ամբողջ Ռուսաստանը ընդհանրապես և Կովկասը մասնավորապես»[5]։

Այդ զեկուցագրում նշվում էր, որ երկաթուղայինները սկզբում միայն տնտեսական պահանջներ էին դնում, բայց հետագայում գործադուլային շարժման ընթացքը վերջնականապես համոզեց, որ «տնտեսական հարցերը երկրորդական նշանակություն ունեն, գլխավորը և հիմնականը այն էր, որ գործադուլները հիմնվում էին քաղաքական ագիտացիայի վրա... որ գործադուլների պատճառը պետք է փնտրել ոչ թե տնտեսական պայմաններում, այլ բանվորական ընդհանուր սոցիալիստական բնույթ կրող շարժման մեջ, որը հանգես է գալիս ամբողջ Ռուսաստանում»[6]։ Ահա այդ քաղաքական պայքարի գաղափարը խոր արմատներ էր դցել նաև Ալեքսանդրոպոլի աշխատավորական ամենալայն խավերի մեջ։ Իսկ այդ փաստը շատ խոշոր նշանակություն ուներ հայ

---

1 ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 87, թ. 43։
2 Նույն տեղում։
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 106։
4 ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 194, թ. 15։
5 Նույն տեղում, գ. 192, թ. 4։
6 Նույն տեղում։

բանվորին Կոմունիստական պարտիայի ինտերնացիոնալիստական իդեոլոգիայով դաստիարակելու գործում։

«Ցարիզմի լծի տակ հեծող բոլոր ազգությունների պրոլետարների համերաշխությունը,— գրում է Ստ. Շահումյանը,— ռևոլյուցիայի հաղթության գրլխավոր գրավականն է»[1]։

Մի գաղտնի հաղորդագրության մեջ 1906 թ. փետրվարի 4-ին հայտնվում էր, որ Հայաստանի շրջանները ամբողջովին վարակված են ռևոլյուցիոն շարժումներով, իսկ Ալեքսանդրոպոլի շրջանը «...շատ եռանդուն մասնակցություն է ունեցել համառուսաստանյան վերջին գործադուլներին»[2]։ Ռուսաստանի կարևոր ռևոլյուցիոն շրջանների օրինակով Ալեքսանդրոպոլը «հանդիսացել է քաղաքական դեմոնստրացիաների և միտինգների ասպարեզ»[3]։

Կովկասի ոստիկանական վարչության պետը 1906 թ. փետրվարի 13-ին հաղորդագրության մեջ Ալեքսանդրոպոլը համարում է ամենառևոլյուցիոն կետը Երևանի նահանգում և գտնում, որ այն «շատ ուժեղ կերպով է արտահայտում վերջին ժամանակի ռևոլյուցիոն տրամադրությունները...»[4]։

Գործադուլ էին հայտարարում և քաղաքական պայքարի էին դուրս գալիս աշխատավորական այնպիսի խավերը, որոնք առաջ բոլորովին կտրված էին հասարակական կյանքից։

«Նամակ Ալեքսանդրոպոլից» հոդվածում «Կայծ» թերթի Ալեքսանդրոպոլի թղթակիցը հայտնում էր, որ գործադուլային շարժումներին և քաղաքական պայքարին մասնակցում են քաղաքի աշխատավորների բոլոր խավերը, որոնց ղեկավարում է ՌՍԴԲՊ-ն, 1906 թ. մայիսի 27-ին «...գործադուլ արին պայտահատ, դարբին բանվորները մոտ 200 հոգի, կազմելով բացօթյա միտինգ, ուր հրավիրված էին դասախոսելու և կազմակերպելու տեղիս ընկերներից, բոլորն էլ կազմակերպվեցին և մտան մեր դրոշի տակ»[5],— գրում է «Կայծը»։

1906 թ. հունիսի 6-ին Ալեքսանդրոպոլում գործադուլ հայտարարեցին կոշկակարների և դարբինների ենթավարպետները, պահանջելով 10%-ով բարձրացնել աշխատավարձը և պակասեցնել աշխատանքի ժամերը[6]։

1906 թ. հուլիսի 3-ին Ալեքսանդրոպոլի փոխադարձ վարկի ընկերության ծառայողները ՌՍԴԲ պարտիայի անդամների ուղղությամբ գործադուլ հայտարարեցին և ներկայացրին 8 կետից բաղկացած պահանջներ, որտեղ խնդիր էր դրվում՝ ավելացնել աշխատավարձը, բարելավել իրենց նյութական ու տնտեսական դրությունը, բանվոր-ծառայողների աշխատանքից հեռացնելու հարցը համաձայնեցնել ընկերական դատարանի հետ և այլն։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը հատուկ թռուցիկ բաց թողեց, կոչ անելով աշխատավորներին՝ պայքարի դուրս գալ հնչողների դեմ։ Ի պատասխան այդ կոչի, քաղաքի մի շարք հիմնարկների բանվորներ և ծառայողներ, որոնց թվում և քաղաքային բանկի ծառայողները, ներկայացրին իրենց պահանջները, հայտնելով, որ բացասական պատասխան ստանալու դեպքում պատրաստ են գործադուլ հայտարարելու[7]։

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 62, 1948։
[2] ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍ-ի ինստ. Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, դ. 112, թ. 43։
[3] Նույն տեղում։
[4] ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, դ. 37, թ. 23։
[5] «Կայծ», № 30, 1906։
[6] ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, դ. 200, թ. 109։
[7] «Կայծ», № 35, 1906։

1906 թ. օգոստոսի 11-ին Ալեքսանդրոպոլի հացթուխ բանվորները և խանութների աշխատողները աշխատանքը դադարեցրին և գործադուլ հայտարարեցին, ներկայացնելով հետևյալ պահանջները. ավելացնել աշխատավարձը, ամեն տարի մի ամսյա արձակուրդ տալ, կրճատել աշխատանքի օրվա տևողությունը և այլն [1]։

Սեպտեմբերի 19-ին գործադուլ հայտարարեցին Ալեքսանդրոպոլի տպարանի բանվորները, որոնք մի շարք տնտեսական պահանջների հետ մեկտեղ 8 ժամյա աշխատանքային օրվա պահանջ դրին։

1906 թ. ամռան ամիսներին սոցիալ-դեմոկրատական տեղական կազմակերպությունների եռանդուն աշխատանքի շնորհիվ հնարավոր է դառնում Ալեքսանդրոպոլում լայն չափով տարածել անլեգալ կոչերը, թռուցիկներն ու բրոշյուրները։ Այդ գրականության զգալի մասը ստացվում էր Թիֆլիսից, իսկ մյուս մասը տպվում և բազմացվում էր տեղի տպարանում [2]։ Ոստիկանության կողմից պատահական կարգով հավաքած ռևոլյուցիոն կոչերի ու թռուցիկների քանակը ցույց է տալիս, թե ինչպիսի մեծ չափերով էր տարածվում անլեգալ գրականությունը Ալեքսանդրոպոլում։

1906 թ. օգոստոսի 12-ին գրված ոստիկանական մի գաղտնի հաղորդագրություն հայտնում է, որ Ալեքսանդրոպոլի կայազորի «Համառուսական զինվորական միությունը» տպագրել և բազմացրել է «Եղբայր կարարդինցիներ» կոչը, որից 110 օրինակ ոստիկանությունը հավաքել է ագենտուրայի միջոցով»

Ալեքսանդրոպոլում ոստիկանությունը հայտնաբերում է նաև գաղտնի պահեստ, որտեղ պահվում էր մեծ քանակությամբ ռևոլյուցիոն գրականություն՝ ռուսերեն, վրացերեն և հայերեն լեզուներով։

Բոլոր նրանք, ովքեր ոստիկանության կողմից որևէ կասկածի տակ էին ընկնում, բանտարկվում էին և դատական գործ էր սկսվում նրանց նկատմամբ [4]։

Ցարական սատրապները ամենադաժան միջոցներով ճնշում և հալածում էին իրենց ազատության համար պայքարող աշխատավորներին։ Մեծը, գնդակոծությունը, փողոցային ջարդերը դարձել էին սովորական երևույթ։

1906 թ. հուլիսի 7-ին բոլշևիկյան «Կայծ» թերթը տպագրում է Ալեքսանդրոպոլի բանտարկյալների մի նամակ, որտեղ նրանք գրում էին.

«Քննության տակ գտնված բանտարկյալներս, հակառակ նույնիսկ գոյություն ունեցող օրենքների, պահվում ենք շղթայակապ» [5]։

Բոլշևիկները ոչ միայն գաղտնի կապ էին պահպանում բանտարկյալների հետ, այլև իրենց եղբայրների դիմումներն ու նամակները մեծ դժվարությամբ բանտից դուրս բերելով՝ մամուլի միջոցով հասարակության ուշադրությունն էին հրավիրում քաղաքական պայքարի հերոս մարտիկների վրա։

Ալեքսանդրոպոլում ծավալված ռևոլյուցիոն պայքարին ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս աշակերտական երիտասարդությունը, ուրիշ քաղաքներից վերադարձած ուսանողները և ինտելիգենցիայի տարբեր խավերը։ Ուսանող Ա. Շահինյանը անլեգալ գրականություն տարածելու համար բանտարկվում է։

---

1 ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 40, գ. 10, թ. 114։
2 ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍ-ի ինստ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 251։
3 ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 10, գ. 207, թ. 200։
4 ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍ-ի ինստ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 169։
5 «Կայծ», № 35, 7 հուլիսի, 1906։

Այստեղ ակտիվ ռևոլյուցիոն աշխատանք է տարել և բանտարկվել Մարտիրոս Միրաքյանը («Շանթ»), Տեր-Հովսեփյանը, Ա. Թամանյանը և ուրիշները։

* * *

Ռևոլյուցիոն շարժումն ու զինված ելույթները մեծ չափով տարածվել էին նաև Ալեքսանդրոպոլի կայազորում։ ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը զինվորական մասերում ստեղծել էր իր ագիտացիոն աշխատանքի և ռևոլյուցիոն գործունեության լայն ցանցը։ Այստեղ լայնորեն տարածվում էին պարտիական անլեգալ գրականությունը, կոչերը, թռուցիկները և բրոշյուրները, որոնք հսկայական դեր էին կատարում։

Զինվորական մի գաղտնի հաղորդագրության մեջ ասվում է, որ Ալեքսանդրոպոլում գոյություն ունի ռևոլյուցիոն կազմակերպություն, որ զբաղվում է զինվորների մեջ հակապետական պրոկլամացիաներ տարածելու գործով։ 1905 թ. ապրիլի 25-ին Ալեքսանդրոպոլից ժանդարմական վարչությունը հայտնում էր, որ քաղաքում և կայազորի «շարքային զինվորների մեջ սկսել են տարածել հակապետական պրոկլամացիաներ, այն էլ մեծ քանակությամբ...»[2]։

Բոլշևիկները լայն աշխատանք էին տանում զինվորների մեջ, ցույց տալով ժողովրդի իսկական թշնամիներին՝ ցարին և բոլոր ճնշողներին, կոչ անելով դենքը ուղղել նրանց դեմ։

Զինվորներին ուղղված մի ռևոլյուցիոն կոչի մեջ նշվում էր, որ ապստամբները, քաղաքական պայքարի մարտիկները «...ժողովուրդի թշնամիներ չեն, այլ աղնիվ մարդիկ են, որոնք ուրիշների համար չեն խնայում անգամ իրենց կյանքը»[3]։

Մի ուրիշ կոչում ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կայազորի զինվորական կազմակերպությունը դիմում է զինվորներին և առաջարկում՝ միանալ իրենց ապստամբած եղբայրների՝ բանվորների հետ և դենքը ուղղել բոլոր ճնշողների դեմ[4]։

Զորքի մեջ կատարվող ռևոլյուցիոն խմորումները առանձնապես ուժեղացան հոկտեմբերյան գործադուլների ժամանակ։

Սոցիալ-դեմոկրատական պարտիայի կատարած աշխատանքի շնորհիվ էր, որ գնալով ուժեղանում էին ռևոլյուցիոն ելույթներն ու ապստամբությունները Ալեքսանդրոպոլի կայազորի զորամասերում։ Այսպես, օրինակ, 1905 թ. նոյեմբերի 6-ին ապստամբեցին Ալեքսանդրոպոլում գտնվող 153 Բաքվի և Գաբարտինյան հետևակ գնդերը։

Նոյեմբերի 22-ին ցերեկվա ժամը 11-ին Ալեքսանդրոպոլի հայկական գերեզմանատանը Բաքվի 153 հետևակ գնդի մոտ 300 զինվորներ նորից են ապստամբում և կազմակերպում ընդհանուր միտինգ։ Այդ միտինգում զինվորները արտասանում են ռևոլյուցիոն ճառեր և կոչ են անում՝ պայքարել ազատության համար։ Ապստամբների պահանջով գալիս են հրամանատարական կազմի ներկայացուցիչները և կայազորի հրամանատար գեներալ-լեյտենանտ Տարանո-

---

1 ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍ-ի ինստ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 169։
2 Նույն տեղում։
3 Նույն տեղում, գ. 259։
4 Նույն տեղում, գ. 245։

վսկին։ Զինվորները նրանց ներկայացնում են իրենց առաջարկները, պահանջում անհապաղ զորացրել պահեստային զինվորներին, ազատել իրենց ստորացուցիչ պարտականություններից ու հրամանատարների հալածանքներից [1]։

Զինվորների այդ ելույթները սերտորեն կապված էին Ալեքսանդրոպոլի աշխատավորների պայքարի հետ։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը 1905 թ. նոյեմբերի 24-ին, զինվորների խորհրդակցությունում քննարկելով զինվորների տնտեսական և քաղաքական դրությունը, առաջադրեց 33 կետից բաղկացած պահանջներ, որտեղ դրվում էին բանակի դեմոկրատացման, զինվորների իրավական-քաղաքական և տնտեսական դրության բարելավման խնդիրները [2]։ Նույն օրը բոլշևիկների բաց թողած մի կոչում նշվում էր, որ ցարական կառավարությունը ծառայության ժամկետը լրացրած զինվորներին չի զորացրում, որպեսզի նրանց սվիններով խեղդի ռևոլյուցիան։ Իրենք՝ զինվորները ասում էին, որ մեզ չազատեցին, մինչև որ ցույց չտվինք, որ մենք «նույնպես կկարողանանք պաշտպանել մեր ազատությունը, ինչպես ամբողջ Ռուսաստանն է պաշտպանում» [3]։

Բոլշևիկները մեծ աշխատանք էին ծավալում, որպեսզի երկաթուղայինների, փոստ-հեռագրատան աշխատողների դեկտեմբերյան գործադուլներին մասնակից դարձնեն նաև զորամասերին։

Ալեքսանդրոպոլի կայազորի զորամասերի զգալի մասը պատրաստ էր միանալու աշխատավորներին, սվիններն ուղղել ճնշողների ու բռնակալների դեմ։ Այդ օրերին հրատարակված պրոկլամացիաները և այլ փաստաթղթեր ցույց են տալիս, որ զինվորական մասերից շատերը պատրաստված են եղել զինված ապստամբության, սակայն ցարական սատրապները կարողացել են կանխել այն, բանտարկել ռևոլյուցիոն կոմիտեի կազմը և դաժան միջոցներով ճնշել ու կասեցնել բանակում պատրաստվող այդ ապստամբությունը։

Ալեքսանդրոպոլի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության 1905 թ. դեկտեմբերի 20-ի պրոկլամացիայում, ուղղված զինվորներին, նշվում է, որ ցարական կառավարությունը ցանկանում է «մեր արյան մեջ խեղդել այն շարժումը, որը այնպիսի ուժեղ ալիքներով ողողեց հասարակության բոլոր խավերը, չանտեսելով նաև բանակը, որովհետև մեր թշնամին այդ շարժման մեջ տեսնում է իր անկումը, որովհետև նրանք չեն կարող այլևս ուռճացնել իրենց գերպանը ժողովրդական հարստության հաշվին, որտեղ ամեն մի գրոշը արյունով է թաթախված» [4]։

Այդ պրոկլամացիան կոչ էր անում զինվորներին՝ պայքարել ժողովրդի շահերի համար, միանալ նրանց պայքարին, տապալել ցարի դաժան և ատելի տիրակալությունը։

Երբ Թիֆլիսից Ալեքսանդրոպոլ են տեղափոխում Մինգրելյան գնդի 27 զինվորների, որոնք իշխանությանը զինված դիմադրություն ցույց տալու համար մահվան էին դատապարտվել, ամբողջ կայազորում իրարանցում է սկսվում։ Զինվորները պատրաստվում են զինված ուժով պաշտպանել ընկերներին։

---

[1] ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 32, թ. 264։

[2] ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍ-ի ինստ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 210։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, գ. 223։

Նրանց պաշտպանության են դուրս գալիս նաև կապավորները և մյուս զինվորները, որոնք նույնպես պահանջում են ազատել իրենց եղբայրներին։

Ռազմական դատարանը և ցարական չինովնիկները ռևոլյուցիոն շարժման նոր պոռթկումից վախեցած՝ հարկադրված են լինում պատժի խիստ միջոցներ չկիրառել Մինդրելյան գնդի զինվորների նկատմամբ։ Զինվորների մի մասը բոլորովին ազատվում է, իսկ մնացածները ենթարկվում են թեթև պատիժների։

Զինվորների տարած այդ հաղթանակը ապացուցում էր նրանց կազմակերպվածությունն ու միասնությունը, որն արդյունք էր տեղական բոլշևիկյան կազմակերպության անդուլ աշխատանքի։ Ալեքսանդրոպոլի կայազորի Սովետը, որը հանդիսանում էր ռևոլյուցիոն շարժման ոգին, միանգամայն ճիշտ հետևություն է անում, դրելով իր լոզունգը կոչում. «Եթե բոլորը որպես մի մարդ հանդես չգային պաշտպանելու իրենց եղբայրներին, ապա նրանք գնդակահարված կլինեին»[1]։

Կոմունիստական պարտիան շատ կարևոր նշանակություն էր տալիս զինվորների մեջ տարվող աշխատանքին։ Այդ առավել չափով կարևոր էր Հայաստանի պայմաններում, երբ ռևոլյուցիոն զինվորները մեծ չափով կարողանում էին ազդել մասսաների քաղաքական ակտիվությունը բարձրացնելու վրա։ Բավական է ասել, որ Ալեքսանդրոպոլի կայազորը բաղկացած էր մոտ 10,500 մարդուց։ Զինվորների մի զգալի մասը հետևում էր բոլշևիկյան պարտիայի լոզունգներին և պատրաստ էր պայքարի դուրս գալ նրա կանչով։

Ցարական բանակի հրամանատարությունը ռևոլյուցիոն կազմակերպություններն ու խմբերը ցրելու և կազմալուծելու նպատակով՝ արագորեն զորամասերը փոխադրում էր մի տեղից մյուսը, փոխում էր զինվորական միավորումների կազմը։ Չնայած դրան՝ ռևոլյուցիոն խմբակներում ընդգրկված զինվորների թիվը գնալով աճում էր, կազմակերպչորեն ու քաղաքականապես ամրապնդվում։

Ալեքսանդրոպոլի երկաթուղայինների գործադուլը և քաղաքի բանվորների ու ծառայողների ռևոլյուցիոն ելույթները ճնշելու համար կայազորի հրամանատարությունը կարգադրում է համազարկով արյան մեջ խեղդել աշխատավորների ցույցերը։ Դնդակոծումից հետո նկատվում է, որ զոհերի թիվը աննշան է։

Պարզվում է, որ զինվորները չեն ցանկանում սպանել ազատության համար մարտնչողներին, նրանց «մեծամասնությունը գնդակը օդում էր արձակում, կրակում էին (աշխատավորների վրա — Ն. Ա.) միայն փոքրաթիվ ստորներն ու անպիտանները, որոնցից ամեն մի վաշտում կգտնվի 2—3 հոգի»[2]։

Այդ դեպքերից դաս առնելով՝ հրամանատարությունը մեծ զգուշություն է ցուցաբերում և անվստահությամբ է վերաբերվում գործադուլային շարժումները ճնշելու համար ուղարկվող զորքերին։

1906 թ. հունիսի 25-ին Ալեքսանդրոպոլի կայազորի զորամասերում նորից տեղի են ունենում ռևոլյուցիոն ելույթներ։ Դրա առիթը լինում է այն, որ հունիսի 25-ին ցերեկվա ժամը 4-ին Ալեքսանդրոպոլի բանտն են տեղափոխվում Թիֆլիսում բանտարկված երկաթուղային գումարտակի մի խումբ շարքային-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Ս-ի ինստ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 234։

[2] „Пролетарий", № 11, 1905.

ներ։ Զինվորական մասերում արագորեն լուր է տարածվում, որ դրանք ապըստամբ այն զինվորներից են, որոնց որոշված է գնդակահարել։

Զինվորները՝ արտահայտելով իրենց զայրույթը, արագ կերպով սկսում են միտինգի հավաքվել՝ քննարկելու բանտարկյալներին ազատելու հարցը։ Շուտով ուրիշ տեղերից մեծ քանակությամբ զորք են հրավիրում և շրջապատում ապստամբների վրանները։ Գնդապետ Գուրևի հրամանով ապստամբությունը դաժանորեն ճնշվում է, ապստամբության ղեկավարներից 25 հոգի դատի տրվում [1]։

Ցարական սատրապների այդ դաժանության հակառակ՝ Ալեքսանդրոպոլի կայազորի զինվորների ռևոլյուցիոն պայքարը է լ ավելի է ուժեղանում։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը՝ ելնելով պարտիայի III համագումարի որոշումներից, զգալի աշխատանք է կատարում բանվորներին զինելու և ընդհանուր զինված ապստամբության պատրաստելու ուղղությամբ։ «Զենքի պաշարներն ավելացնելու և նրա հայթայթումն ու գործարանային եղանակով պատրաստումը կազմակերպելու հետ միասին,— գրում է Ր. Վ. Ստալինը,— անհրաժեշտ է ամենալուրջ ուշադրությունը դարձնել ամեն տեսակ մարտական ջոկատների ստեղծման վրա՝ ձեռք բերած զենքն օգտագործելու համար» [2]։

Ալեքսանդրոպոլի բոլշևիկները զենքի պաշարներ էին ստեղծում, թե՛ արհեստանոցներում գաղտնի կերպով այն պատրաստելու և թե՛ գլխավորապես զինվորական պահեստներից մեծ քանակությամբ ձեռք բերելու միջոցով։ Բազմաթիվ դեպքեր են եղել, երբ հենց հերթապահ զինվորների աջակցությամբ գաղտնի կերպով մեծ քանակությամբ զենք է դուրս բերվել և հանձնվել ռևոլյուցիոն կազմակերպություններին՝ զինված ապստամբությունը նախապատրաստելու համար։ Ռևոլյուցիոն գործիչների հսկողությամբ ստեղծվում են գաղտնի պահեստներ, որտեղ թաքցվում են զենքը և ռևոլյուցիոն գրականությունը։ Ամեն անգամ, երբ հայտնաբերվում է զենքի անհետացում պահեստից, զինվորական դատարանը մեծ դործ է բացում, տասնյակ զինվորներ և քաղաքացիներ բանտարկվում և դատապարտվում են։ Բայց այս բոլորը ռևոլյուցիոն մարտիկներին չեն վախեցնում, նրանք շարունակում են իրենց ռևոլյուցիոն գործը ավելի մեծ եռանդով։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը իր մի ուրիշ կոչում՝ ուղղված Ալեքսանդրոպոլի կայազորի զինվորներին, նշում է, որ ռուս ժողովուրդը մեծ գոհունակությամբ է ողջունում ռուս զինվորներին, որոնք հասկացան ժողովրդի շահերը և նրա դահիճից դարձան ժողովրդի բարեկամը։ Զինվորները աստիճանաբար համոզվեցին, որ ցարին ծառայելը նրանց դարձնում է իրենց ժողովրդի դահիճը [3]։

Ալեքսանդրոպոլում գտնվող զինվորները նույն ծանր վիճակում էին գտնվում, ինչ որ ցարական բանակի բոլոր զորամասերում։ Օրինակ, Ալեքսանդրոպոլում գտնվող Բակինսկի գնդի 12-րդ վաշտի հրամանատարը ծայրահեղ դաժանություն է ցուցաբերում, որի հետևանքով զինվորները հրաժարվում են

---

1. ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 63, գ. 3913, թ. 198։
2. Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 152։
3. ՍՄԿՊ ԿԿ կից ՄԼԼՍ-ի ինստ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 241։

կատարել նրա հրամանը։ Հրամանատարությունը բոլորովին չհետաքրքրվելով, թե ինչումն է բանը, 23 զինվորների հանձնում է ռազմական դատարանին[1]։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը զինվորներին ուղղված մի կոչում, նշում է, որ անհրաժեշտ է միավորել ուժերը, ցարիզմի արյունոտ գահը տապալելու համար։ «Մի ժամանակ մեր կառավարությունը կազմակերպում էր միայն հրեաների և լեհերի կոտորածները։ Իսկ այժմ նա սպանում է բոլոր ռուս քաղաքացիներին... Ցանկանալով խեղդել ազատության բոլոր մարտիկներին, նա ուզում է ոչնչացնել բոլոր ռուս քաղաքացիներին, նրա համար, որ բոլորն էլ ազատություն են պահանջում։ Այս տարի մեր կառավարությունը ոչ մի օր չի հանգստացել, ամեն օր նա իր զազրելի թույթը անպաշտպան կանանց և երեխաների արյունով է թաթախել։ Այնպես «սիրալիր» է մեզ կառավարում, որ այս տարի 26 նահանգները հասցրել է սովի»[2]։

* *

Հայաստանում ռևոլյուցիոն շարժումների ծավալմանը մեծ հարված հասցրեց ցարիզմի կողմից հրահրված հայ-ադրբեջանական պրովոկացիոն կոտորածը։ Կոմունիստական պարտիան բացատրական լայն աշխատանք էր տանում հայ և ադրբեջանցի աշխատավորների մեջ՝ վերջ տալու համար այդ եղբայրասպան պատերազմին։

1905 թ. նոյեմբերի 30-ին Ալեքսանդրոպոլ կայարանում ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպության ղեկավարությամբ տեղի է ունենում աշխատավորների միտինգ, որը վերածվում է բողոքի ցույցի՝ ընդդեմ ցարական սատրապների։ Միտինգը իր որոշման մեջ նշում է, որ հայ-ադրբեջանական եղբայրասպան կոտորածը բոլոր ռեակցիոն ուժերի գործն է, որը «խանգարում է մեծ ազատագրական շարժմանը Ռուսաստանում»[3]։

Աշխատավորները միահամուռ կերպով խնդրում են ՌՍԴԲՊ-ի Ալեքսանդրոպոլի կազմակերպությանը՝ մասսայական ագիտացիոն լայն աշխատանք տանել Կարսի և Երևանի երկաթգծի ամբողջ ուղղությամբ և կանխել հայ-ադրբեջանական ընդհարումները։ Առաջարկվում է կազմել հատուկ բրիգադաներ, եղբայրասպան կռիվները դադարեցնելու համար։

Ալեքսանդրոպոլում ծավալված այդ աշխատանքի մասին «Կավկազսկի բաբոչի լիստոկ» թերթը գրում էր. «1905 թ. նոյեմբերի 30-ին ցերեկվա ժամը 3-ին Ալեքսանդրոպոլ կայարանի դեպոյի մոտ Ալեքսանդրոպոլի սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության գլխավորությամբ կայացավ Ալեքսանդրոպոլ կայարանի բոլոր բանվորների և ծառայողների միտինգը։ Մասնակցում էին նաև Կարսի բանվորներից, ինչպես նաև վերանորոգման արհեստանոցների բանվորները և քաղաքի բնակիչները»[4]։

Միտինգի մասնակիցները որոշում են՝ ագիտացիոն մասսայական աշխատանք ծավալել հայ և ադրբեջանական աշխատավորների մեջ, թույլ չտալ եղ-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Ս-ի ինստ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 241։

[2] Նույն տեղում, գ. 253։

[3] ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Ս-ի ինստիտուտի Վ.բացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 112, թ. 32,

[4] „Кавказский рабочий листок", № 10, 1905.

բայրասպան պատերազմի տարածմանը Ալեքսանդրոպոլ—Երևան, Ալեքսանդրոպոլ—Կարս, Ալեքսանդրոպոլ—Թիֆլիս գծերի ուղղությամբ, կազմակերպել բանվորական դրուժինաներ՝ կարգ պաշտպանելու և հայ-ադրբեջանական ընդհարումները կանխելու համար։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միության և նրա տեղական կազմակերպությունները լայն աշխատանք ծավալելով բանվոր դասակարգի և աշխատավորական խավերի մեջ՝ կարճ ժամանակում հանգցրեցին ազգային կոտորածի հրդեհը։

Բոլշևիկյան «Կայծ» թերթը «Նամակ Ալեքսանդրոպոլից» թղթակցությունում (1906 թ. հունիսի 25-ին) մերկացնում էր դաշնակցության քայքայիչ և հակաժողովրդական դերը Ալեքսանդրոպոլում, ցույց տալով, որ նա՝ ծառայելով ցարական ոստիկանությանը, պրովոկացիոն դեր է կատարում, խանգարում բանվորների միավորմանը և նրանց քաղաքական պայքարին։

Չնայած այս բոլորին, գնալով ուժեղանում էին ռևոլյուցիոն շարժումները, աճում էր ՌՍԴԲՊ-ի դերը [1]։

Դաշնակները շատ անգամ հրահրելով հայ-ադրբեջանական կոտորածներ, ակտիվ կերպով մասնակցում էին թալանին, հափշտակելով մեծ ավար [2]։

Կարսի մարզում դաշնակները ստիպում էին հայերին զինվել ադրբեջանցիների դեմ և դրանով իսկ բորբոքում էին ազգամիջյան կոտորածները [3]։

Դաշնակցությունը քայքայիչ աշխատանք կատարելով հայ աշխատավորության մեջ հանդես էր գալիս որպես ցարիզմի գործակալ, ամեն կերպ ջանում էր բթացնել աշխատավորության դասակարգային գիտակցությունը՝ խոսելով ամբողջ «հայ ազգի» կամ «հայ ցեղի» անունից։

Այսպիսով, ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին Ալեքսանդրոպոլը հանդես է գալիս որպես քաղաքական պայքարի կարևոր կենտրոններից մեկը և Հայաստանի մյուս շրջաններում ծավալված ռևոլյուցիոն պայքարի վրա մեծ ազդեցություն է թողնում։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի ազդեցությամբ, ռուս բանվորների և զինվորների օրինակով, Ալեքսանդրոպոլի աշխատավորները դուրս են գալիս տնտեսական և քաղաքական պայքարի. նրանք կայազորի զինվորների հետ միասին ժամանակին արձագանքում են ռևոլյուցիայի կարևոր իրադարձություններին՝ հունվարյան դեպքերին, հոկտեմբերյան համառուսական գործադուլին, դեկտեմբերի հզոր զինված ապստամբությանը և տեղական պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ հասնում են խոշոր արդյունքների։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիները Ալեքսանդրոպոլի աշխատավորների համար մեծ դաս հանդիսացան. այդ փորձի հիման վրա նրանք հետագա տարիներին վճռական պայքարի դուրս եկան ցարիզմի և բուրժուազիայի դեմ։

---

[1] «Կայծ», № 30, 1906։

[2] „Кавказский рабочий листок", № 9, 1905.

[3] ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 37, թ. 22։